

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ
Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ Ը

ԵՐԵՎԱՆ
Հունվար 2009

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իր նախընտրական ծրագրում եւ երդմնակալության արարողության ելույթում Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը նշել էր, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունը կրելու է շարունակական բնույթ՝ լինելով առավել նախաձեռնող եւ ակտիվ:

ՀՀ նախագահը Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ ծրագրային ելույթով հանդես եկավ Նյու-Յորքում՝ ՍՍԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 63-րդ նստաշրջանում:

Արտաքին գործերի նախարարությունը շարունակել է արտաքին անվտանգության հետազա ամրապնդմանը, երկրի զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմանների ու երաշխիքների ապահովմանը, համաշխարհային եւ տարածաշրջանային գործընթացներում մասնակցության խորացմանն ուղղված դիվանագիտական ջանքերը, բարեկամ եւ գործընկեր երկրների հետ երկկողմ եւ բազմակողմ հարաբերությունների առավել զարգացմանն ու ամրապնդմանը, միջազգային կազմակերպություններում գործուն ներգրավվածության խորացմանն ուղղված քայլերը:

Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրն է եղել արցախյան հիմնահարցի արդարացի լուծմանն ուղղված ջանքերի շարունակումը:

Հայաստանի դաշնակցային եւ ոազմավարական հարաբերությունները Ռուսաստանի հետ շարունակել են խորանալ եւ ամրապնդվել: Տեղի են ունեցել բարձր մակարդակի բազմաթիվ փոխայցելություններ եւ հանդիպումներ, որոնց ժամանակ մշակվել են համագործակցության ընդունակությունները:

Հայաստանի իշխանությունները ջանքեր են գործադրել Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության զարգացման եւ ամրապնդման նպատակով:

Եվրոպական ընտանիքին մերձենալու քաղաքականությունը շարունակվել է: Նախագահ Սերժ Սարգսյանը այցելել է ԵՄ-ում նախագահող Ֆրանսիա, ինչպես նաև Բրյուսել, ուր հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայի եւ Եվրոպական կառույցների դեկավարների հետ: Այցելությունների ընթացքում նախանշվել են ԵՄ հետ համագործակցության նոր հեռանկարները:

Շարունակվել է գործունեությունը երկրի արտաքին անվտանգության ոազմաքաղաքական բաղադրիչների ամրապնդման ուղղությամբ:

2008 թ. Հայաստանը ստանձնեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության նախագահությունը եւ ձեռնամուխ եղավ կազմակերպության դերի բարձրացմանը, անդամ երկրների միջև համագործակցության խորացմանը:

Հայաստանն ակտիվորեն մասնակցել է Անկախ պետությունների համագործակցության շրջանակում տեղի ունեցող գործընթացներին եւ կազմակերպության գործունեությանը:

Զարգացել է գործընկերությունը ՆԱՏՕ-ի հետ, դրական է զմահատվել Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի առաջին երկամյա փուլը:

2008 թ. հոկտեմբերին Հայաստանը ստանձնել է Մեծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության նախագահությունը:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ որդեգրվել է նախաձեռնող ուղեգիծ՝ հավատարիմ մնալով այդ հարաբերություններն առանց նախապայմանների հաստատելու սկզբունքին:

Շարունակել են զարգանալ հարաբերությունները անմիջական հարեւաններ Վրաստանի եւ Իրանի հետ: Ընդլայնվել է համագործակցությունը Եվրոպական երկրների, Չինաստանի եւ Հնդկաստանի հետ: Քայլեր են ձեռնարկվել այլ երկրների հետ կառուցողական ու փոխահավետ հարաբերությունների զարգացման, երկկողմ եւ բազմակողմ համագործակցության ծավալման ուղղությամբ: Իրականացվել են տարրեր մակարդակների տասնյակ փոխայցելություններ, անցկացվել են քաղաքական խորհրդատվություններ, կազմակերպվել են տնտեսական, մշակութային եւ բազմաբնույթ այլ միջոցառումներ:

Եվրոպական կառույցների հետ համագործակցաբար եւ նրանց օժանդակությամբ ջանքեր են գործադրվել Հայաստանում հետընտրական զարգացումների արդյունքում առաջացած լուծելու ուղղությամբ:

Միաժամանակ ՀՀ արտաքին քաղաքականության առջեւ ծառացան խնդիրներ, որոնք մասնավորապես կապված էին գլոբալ ֆինանսական ճգնաժամի հետ:

Զանքեր են գործադրվել Հարավային Օսերիայի շուրջ տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում առաջացած բացասական հետեւանքները մեղմելու ուղղությամբ:

Տարածաշրջանում կայունության, համագործակցության, անվտանգության ու խաղաղության հաստատումը հանդիսացել է ՀՀ արտաքին քաղաքականության առանցքային խնդիրներից մեկը: Հայաստանը ձգտել է իր նպաստը բերել կայուն ու անվտանգ Հարավային Կովկասի կայացման գործում:

2008 թվականին շարունակվել է Հայաստանի մասնակցությունը միջազգային խաղաղապահ գործողություններին եւ ահարեկչության ու այլ մարտահրավերների դեմ տարվող միջազգային համրության պայքարին:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Հայաստանի արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչի առաջնորդականության ուղղության զարգացման եւ տնտեսական անվտանգության ոլորտի խնդիրների լուծմանը, զարգացել եւ խորացել են տնտեսական փոխահավետ կապերը տարրեր երկրների եւ միջազգային կառույցների հետ, տասնյակ երկրների հետ միջկառավարական առեւտրատնտեսական հանձնաժողովներում տարվող աշխատանքների արդյունքում ձեռք են բերվել տնտեսական հետագա համագործակցության ծավալման պայմանավորվածություններ, նախանշվել են նոր ծրագրեր:

Շարունակվել են աշխատանքները նաև մշակութային դիվանագիտության ոլորտում, Հայաստանում եւ տարրեր երկրներում անցկացվել են բազմաբնույթ միջոցառումներ:

ԼԵՇՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Հայաստանի նոր ղեկավարությունը հավատարիմ մնալով արտաքին քաղաքականության շարունակականությանը՝ հայտարարեց արցախյան հիմնախնդիրը բացառապես խաղաղ ճանապարհով լուծելու, բանակցությունները ԵԱՀԿ Սինսկի խմբի շրջանակներում եւ Մադրիդյան առաջարկությունների հիման վրա շարունակելու պատրաստականության մասին՝ ընդգծելով այդ գործնթացին արցախյան կողմի լիակատար մասնակցության անհրաժեշտությունը:

Փետրվարին Ադրբեյջանը ՍԱՎ-ում ներկայացրեց ԼՂ հիմնախնդիրի էությունը խեղաքյուրող եւ Ադրբեյջանի տեսակետները միակողմանիորեն արտահայտող բանաձեի նախագիծ, որը ՍԱՎ-ի ԳԱ քննարկմանը դրվեց մարտին: Բանաձեւը թեև ընդունվեց 39 կողմ քվեարկած ձայներով, այնուամենայնիվ բանաձեւին դեմ քվեարկեցին ԵԱՀԿ Սինսկի խմբի համանախագահ երկրները՝ ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Ռուսաստանի Դաշնությունը: Ադրբեյջանի առաջարկած բանաձեւի նախագիծը չպաշտպանեցին ՍԱՎ-ի անդամ պետությունների գերակշիռ մեծամասնությունը, այդ թվում՝ ԵՄ անդամ բոլոր երկրները:

Ադրբեյջանական կողմը փորձեր կատարեց ներկայացնել ՍԱՎ-ի ԳԱ բանաձեւը որպես բանակցությունների հիմք, Ժխտելով Մադրիդյան առաջարկությունների գոյությունը, եւ զանաց լուծարել Սինսկի խմբի բանակցային ձեւաչափը:

2008թ. տեղի են ունեցել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիեւի երկու հանդիպում. հունիսի 6-ին՝ Սանկտ-Պետերբուրգում ու նոյեմբերի 2-ին՝ Մոսկվայում: Մոսկվայան հանդիպումը, որ կազմակերպվել էր Ռուսաստանի նախագահ Դմիտրի Սեղմեդեւի միջնորդությամբ եւ նախաձեռնությամբ կարեւոր հանգրվան հանդիսացավ արցախյան հիմնախնդիրի կարգավորման գործընթացի համար: Հայաստանի, Ադրբեյջանի եւ Ռուսաստանի նախագահների կողմից հանդիպման արդյունքում ստորագրվեց հոչակագիր, որը նախատեսում է բանակցությունների շարունակումը Սինսկի խմբի շրջանակներում եւ մադրիդյան առաջարկությունների հիման վրա միջազգային իրավունքի սկզբունքների վրա հիմնված եւ միջազգային երաշխիքներով ամրապնդված ԼՂ հիմնախնդիրի խաղաղ քաղաքական կարգավորում: Կարեւորվում է նաեւ վստահության ամրապնդման միջոցների ձեռնարկումը:

Հայաստանի եւ Ադրբեյջանի նախագահների համաձարարությամբ երկու երկրների արտգործնախարարները ԵԱՀԿ Սինսկի խմբի համանախագահների աջակցությամբ շարունակել են դարարադյան հիմնախնդիրի կարգավորման ուղիների շուրջ բանակցությունները: Տեղի է ունեցել արտգործնախարարների 7 հանդիպում:

Չնայած շարունակվող ակտիվ բանակցություններին՝ ադրբեյջանական կողմը շարունակեց խեղաքյուրել բանակցային գործընթացի ողջ էությունը՝ շարունակաբար շեշտը դնելով միջազգային իրավունքի միայն մեկ՝ տարածքային ամրողականության սկզբունքի վրա: Ադրբեյջանի ղեկավարությունը շարունակում էր հայտարարել ուազմական ճանապարհով հիմնահարցի լուծման հնարավորության մասին:

Դեկտեմբերի 4-ին ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որով ընդգծվում է Սանկտ-Պետերբուրգում եւ Մոսկվայում Հայաստանի եւ Ադրբեյջանի նախագահների հանդիպումների արդյունքում ձեւավորված դրական միտման պահպանման կարեւորությունը: Հայտարարությունում հասուկ շեշտվում է, որ հիմնախնդիրի խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի:

Դեկտեմբերի 4-5-ը Հելսինկիում կայացած ԵԱՀԿ նախարարական խորհրդի 16-րդ հանդիպումն ընդունեց հայտարարություն ԼՂ հիմնախնդիրի խաղաղ կարգավորման

վերաբերյալ, որտեղ ողջունելով Մոսկվայի հոչակագիրը, ԵԱՀԿ անդամ երկրների արտգործնախարարները կոչ են անում շարունակել բանակցությունները Մինսկի խմբի շրջանակներում ու Մարդիոյան առաջարկությունների հիման վրա: Կոչ է արվում ձեռնամուխ լինել խաղաղության համաձայնագրի մշակմանը եւ կոնկրետ քայլեր ձեռնարկել զինադադարն ամրապնդելու համար:

Հայաստանը հաստատակամ է չեզոքացնելու բանակցային գործընթացի առաջընթացի ճանապարհին ստեղծվող խոչընոտները եւ շարունակելու բանակցությունները Մոսկովյան հոչակագրի եւ Հելսինկիում ընդունված հայտարարությունների ոգուն համապատասխան:

ԱՆՍԻԶԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ

Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի համագործակցությունը ուղղված է եղել երկու հարեւան եւ բարեկամ պետությունների միջև բարիդրացիական հարաբերությունների ամրապնդմանն ու զարգացմանը, համատեղ նոր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, Վրաստանում հայ համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը եւ առկա խնդիրների լուծմանը:

2008թ. օգոստոսի սկզբի Հարավային Օսերիայի շուրջ իրադարձությունները նոր իրողություններ առաջացրեցին տարածաշրջանում: Նշված իրադարձությունները բացասաբար ազդեցին Հայաստանի տնտեսության վրա, պայթեցվեց եւ տեսական ժամանակ անգործության էր մատնված Հայաստանը Վրաստանին կապող երկարուղին, դադարեցվել էին Վրաստանի տարածքով Հայաստան առաջին անհրաժեշտության ապրանքների բեռնափոխադրումները: Այնուամենայնիվ Հայաստանի իշխանությունների ջանքերի շնորհիվ հաջողվեց պահպանել երկրի կենսագործունեության բնականն ընթացքը:

Տարվա ընթացքում Հայաստանի եւ Վրաստանի միջև կայացել են բարձր մակարդակի մի շարք հանդիպումներ: Մեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը կայացել է ՀՀ նախագահի պաշտոնական այցը Վրաստան, որի ընթացքում պայմանավորվուծություններ են ձեռք բերվել այլնտրանքային ճանապարհի կառուցման, անդրասահմանային համագործակցության, երկու երկրների քաղաքացիների միմյանց տարածք մուտք գործելու գործընթացն առավել դյուրացնելու վերաբերյալ: Վրաստանի նախագահը Հայաստանի նախագահին շնորհեց «Ուկե Գեղմ» Վրաստանի բարձրագույն շքանշան:

Դեկտեմբերի 9-ին պաշտոնական այցով Թբիլիսի է այցելել ՀՀ վարչապետը: Այցի ընթացքում կայացել է Միջկառավարական տնտեսական համագործակցության հանձնաժողովի 7-րդ համատեղ նիստը, որը հնարավորություն տվեց քննարկել առկա խնդիրները եւ մշակել երկկողմ համագործակցության հետագա զարգացման ուղիները:

Մեպտեմբերի 12-13-ը կայացել է ԱԳ նախարարի պաշտոնական այցը Վրաստան:

Տարվա ընթացքում շարունակվել են Վրաստանի հայկական դպրոցներին ցուցաբերվող աջակցությունը, ուսուցիչների վերապատրաստման գործընթացը:

ԷՐՄԱՆ

Տարբեր բնագավառներում հայ-իրանական բարիդրացիական փոխահավետ համագործակցությունը շարունակել է զարգանալ:

2008 թ. կայացել են տարբեր մակարդակների մոտ երեք տասնյակ փոխայցելություններ, մշակվել են կյանքի են կոչվել մի շարք ծրագրեր:

2008թ. սեպտեմբերի 15-17-ը ԻԻՀ ԱԳ նախարար Մանուչեհը Սոթքաքի հրավերով երկօրյա պաշտոնական այցով Թեհրան մեկնեց ՀՀ ԱԳ նախարարի գլխավորած պատվիրակությունը: Այցելության ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ Իրանի քարձրագույն քաղաքական դեկանալի կողմէն:

2008թ. նոյեմբերի 22-24-ը ԻԻՀ ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղարի հրավերով Թեհրան մեկնեց ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի գլխավորած պատվիրակությունը: Կայացել են ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարի հանդիպումները ԻԻՀ նախագահի, Սեջլիսի նախագահի, ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղարի եւ ԱԳ նախարարի հետ:

2008թ-ին նկատելի աշխուժություն արձանագրվեց երկողմ տնտեսական հարաբերություններում: Ս.թ. դեկտեմբերի 15-ին Թեհրանում կայացավ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 8-րդ համատեղ նիստը, որի ընթացքում քննարկվել են Իրան-Հայաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման 3-րդ գծի եւ Արարս գետի վրա համատեղ ՀԵԿ-երի շինարարության, ՀՀ տարածքում նավթագույն հետ նավթապահեստարանի կառուցման, Հայաստան – Իրան երկարուղու կառուցման հետ կապված հարցեր: Նիստի արդյունքում ստորագրվեց Փոխըմբռնման հուշագիր, որը նախանշում է Էներգետիկայի, տրանսպորտի եւ կապի, գյուղատնտեսության, առողջապահության, գիտության եւ կրթության, մշակույթի եւ այլ ոլորտներում առկա համագործակցության հետագա ընթացքը:

2008թ. նոյեմբերի վերջին ավարտվեց Իրան-Հայաստան գազատարի 2-րդ հատվածի շինարարությունը:

Հարավային Օսերիայի շուրջ իրադարձությունների օրերին Իրանը ցուցաբերեց աջակցություն Հայաստանին՝ իր տարածքով իրականացնելով առաջին անհրաժեշտության ապրանքների տեղափոխումները:

ԹՈՒՐՔԻԱ

ՀՀ-ում նախագահական ընտրություններից եւ նոր կառավարության ձեւավորումից հետո Հայաստանի նախագահը հանդես եկավ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նախաձեռնությամբ, 2008թ. հունիսին հրավիրեց Թուրքիայի նախագահ Արդուլլահ Գյուլին Երևան միասին դիմելու Հայաստանի եւ Թուրքիայի ֆուտբոլի հավաքականների հանդիպումը:

Նախագահ Գյուլս ընդունեց հրավերը եւ սեպտեմբերի 6-ին այցելեց Երևան: Տեղի ունեցավ երկու երկրների նախագահների հանդիպումը, որի ժամանակ երկուստեք պատրաստակամություն հայտնեցին հարաբերությունների կարգավորման մասին: Նույն օրը տեղի ունեցավ նաև Հայաստանի եւ Թուրքիայի արտգործնախարարների հանդիպումը: Այս նախաձեռնությունը դրական արձագանք գտավ եւ միջազգային հանրության կողմից գնահատվեց որպես համարձակ եւ կառուցղական քայլ:

Հայ-թուրքական երկխոսությունը շարունակություն ստացավ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի եւ ԹՀ արտգործնախարար Ալի Բաբաջանի մի շարք հանդիպումների ընթացքում:

ՈՒՓԱՍԱՏԱՆԻ ԴԱԾՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի եւ Ռուսաստանի դաշնակցային հարաբերությունները շարունակել են ամրապնդվել բոլոր ուղղություններով՝ հիմնվելով մեր ժողովորդների եւ երկրների ավանդական կապերի, ինչպես նաև Բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ օգնության մասին պայմանագրի հիման վրա:

Շարունակել է բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը: Հունիսին իր առաջին արտերկյա պաշտոնական այցելությունը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը կատարեց Մոսկվա: Հոկտեմբերին պատասխան պաշտոնական այցով Երեւան ժամանեց ՌԴ նախագահ Դմիտրի Սերգեյի նոր պատուական պայմանագրադադարի կողմէն կատարեց այցով Երևան ժամանեց ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը: Համագործակցության հետագա խորացման եւ ընդլայնման վերաբերյալ:

Տարվա ընթացքում բազմաթիվ այլ այցեր եւ հանդիպումներ են եղել նախագահների, խորհրդարանների դեկավարների, վարչապետների, անվտանգության խորհուրդների քարտուղարների, արտգործնախարարների, պաշտպանության նախարարների եւ այլ մակարդակներով:

Ռուսաստանը որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ ակտիվորեն ներգրավված է եղել արցախյան հիմնախնդրի կարգավորման բանակցություններում:

Հոկտեմբերի 20-ին Երեւանում տեղի ունեցավ ՀՀ եւ ՌԴ միջկառավարական տնտեսական հանձնաժողովի 10-րդ նիստը, որի ընթացքում կողմերն ամփոփեցին հայ ռուսական տնտեսական հարաբերությունները, ընդունվեց գործողությունների ծրագիր առաջիկա մեկ տարվա համար:

Հայ-ռուսական տնտեսական համագործակցությունը շարունակել է խորանալ: Ռուսաստանյան ներդրումները Հայաստանի տնտեսության մեջ գերազանցել են 1 միլիարդ 300 մլն դոլարի սահմանագիծը: «Հայկական երկարութիւն» ՊՓԲԸ-ի կառավարման մրցույթը շահեց «Ռուսաստանյան երկարութիւն» ընկերությունը:

Շարունակել են ակտիվորեն զարգանալ գիտության, կրթության եւ մշակույթի ոլորտներում համագործակցությունն ու փոխանակումները:

ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

2008 թվականին ջամքեր գործադրվեցին ԱՄՆ հետ բարեկամական գործընկերության խորացման եւ սերտացման նպատակով:

Սեպտեմբերին ՄԱԿ-ի ԳԱ նատաշրջանին մասնակցելու նպատակով Նյու-Յորքում գտնվող ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսին, քննարկել են Հայաստան-ԱՄՆ երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները:

Հոկտեմբերին Համաշխարհային բանկի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի տարեկան հանդիպմանը մասնակցելու նպատակով Վաշինգտոնում գտնվող ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը հանդիպումներ է ունեցել ԱՄՆ փոխնագահ Դիք Չեյնիի, պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի եւ առեւտրի քարտուղար Կարլոս Գուտիերեսի հետ:

2008 թ. հունիսին պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հրավերով Վաշինգտոն է այցելել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը, որտեղ հանդիպումներ է ունեցել պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի, ԱՄՆ նախագահի օգնական դեսպան Զեյմս Ջեֆրիի, պետքարտուղարի

տեղակալներ Դենիել Ֆրիդի եւ Դեվիդ Կրամերի, «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գործադիր տնօրեն Զոն Դանիլովիչի, ԱՄՆ կոնգրեսի անդամների հետ:

2008թ. ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը ստորագրեց հատկացումների մասին օրենքը, որով հաստատվեց Հայաստանին 58,5 մլն. դոլարի ֆինանսական աջակցություն: Լեռնային Ղարաբաղին հատկացվելիք օգնության վերաբերյալ կոչ է արված պետքարտուղարությանը այդ հարցում առաջնորդվել Ներկայացուցիչների պալատի բանաձեռվ, ըստ որի Լեռնային Ղարաբաղին հատկացվել է մինչեւ 6 մլն. դոլարի օգնություն:

2008 թ. նոյեմբերին Վաշինգտոնում կայացավ հայ-ամերիկյան առեւտրատնտեսական հարաբերությունները կանոնակարգող տնտեսական հարցերով հայ-ամերիկյան աշխատանքային խմբի հերթական նստաշրջանը, որին մասնակցեց հայկական կողմի համանախագահ, ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի գլխավորած պատվիրակությունը: Նիստին քննարկվեց երկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման հետ կապված հարցերի փաթեթը: Ստորագրվեց Օդային տրանսպորտի մասին համաձայնագիր:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Եվրոպական միություն

Եվրոպական ընտանիքին մերձենալուն ուղղված քաղաքականությունը շարունակվել է, մասնավորապես խորացել է համագործակցությունը Եվրոպական հարեւանության ծրագրի շրջանակներում: 2008-ի դեկտեմբերին Եվրոպական հանձնաժողովը հանդես եկավ «Արեւելյան գործընկերություն» առաջարկությամբ, որը ողջունվեց Հայաստանի կողմից: Այն կարող է որակական նոր մակարդակի բարձրացնել ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները:

Քաղաքական երկխոսության խորացման տեսակետից կարեւոր նշանակություն ունեցան ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի այցերը նոյեմբերի 3-4-ը՝ Եվրոպական միությունում նախագահող Ֆրանսիա եւ նոյեմբերի 5-6-ը՝ Բրյուսել՝ ԵՄ կառույցներ, որոնք նոր լիցք հաղորդեցին Հայաստան- Եվրոպական միություն համագործակցությանը: Այցելության շրջանակներում համաձայնագիր է ստորագրվել Հայաստան ԵՄ խորհրդատունների խմբի գործուղման վերաբերյալ, որոնք պետք է աշխատանքներ ծավալեն Հայաստանում բարեփոխումների գործընթացին աջակցելու նպատակով:

2008թ. Հայաստանը շոշափելի առաջընթաց է արձանագրել ԵՄ հետ արտաքին քաղաքականության ասպարեզում սերտ համագործակցության հաստատման ուղղությամբ, որը դրսեւրդվել է քաղաքական բարձր մակարդակի երկխոսության խորացմամբ, քաղաքական խորհրդատվությունների նոր ձեւաչափերի ստեղծմամբ:

Համագործակցության նոր ուղենիշներ մշակելու խնդրում իրենց կարեւոր ներդրումն ունեցան նաև ԵՄ Տրոյկայի, ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի եւ Եվրոպական հանձնաժողովի արտաքին հարաբերությունների գլխավոր տնօրեն Էնեկո Լանդաբուրոյի փոխայցերը:

2008թ. հուլիսին Հայաստանն առաջին անգամ հրավիրվեց մասնակցելու ԵՄ Խորհրդի Քաղաքական եւ անվտանգության կոմիտեի Տրոյկայի մակարդակով քաղաքական խորհրդակցություններին:

2008թ. Հայաստանը առաջընթաց է արձանագրել Գործողությունների ծրագրում նախանշված բոլոր ուղղություններում. բարեփոխումներ հարկային եւ մաքսային քաղաքականության եւ

վարչարարության, գործարար միջավայրի բարելավման ոլորտներում, որոնք բարձր գնահատական են ստացել ԵՄ կողմից:

ԵՄ կողմից ներդրումները խրախուսելու նպատակով Հայաստանը շրջանակային համաձայնագիր է ստորագրել Եվրոպական ներդրումային բանկի հետ:

Հայաստանը հանդես է եկել համագործակցության նոր մարմին ստեղծելու միջոցով ԵՄ հետ համագործակցությունը սերտացնելու նախաձեռնությամբ: Ս.թ. նոյեմբերի 25-ին կայացել է Արդարադատության, ազատության և անվտանգության ներակոմիտեի ստեղծմանն ուղղված համատեղ փորձագիտական հանդիպում:

2008թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ ստորագրվել է Օդային փոխադրումների վերաբերյալ համաձայնագիրը, որը կանոնակարգում է ԵՄ եւ Եվրոպական տնտեսական համայնքի անդամ երկրների հետ Հայաստանի ավիացիոն համագործակցությունը:

2008թ. անցկացված բանակցությունների ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ միգրացիայի բնագավառում ԵՄ երկրների հետ համագործակցությունն ամրապնդելու մասին:

Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն

2008թ. Հայաստանն ակտիվորեն մասնակցել է ԵԱՀԿ երեք հարթություններում իրականացված աշխատանքներին:

Փետրվարի 25-26-ը Հայաստանում էր գտնվում ԵԱՀԿ գործող նախագահ, Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարար Իլկա Կաներվան:

Հուլիսի 1-3-ը Ֆինլանդիայի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանը հանդիպումներ ունեցավ Ֆինլանդիայի ԱԳ նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Ալեքսանդր Ստորի եւ ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ պատվիրակ Հեյկի Տալվիտիեի հետ:

Սեպտեմբերի 10-11-ը Երեւանում էր գտնվում 2009թ. ԵԱՀԿ հունական նախագահության աշխատանքային խումբը, որը ղեկավարում էր ղեկավան Նիկոլաս Կալանցիանոսը:

Դեկտեմբերի 4-5-ը ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցեց Հելսինկիում կայացած ԵԱՀԿ նախարարական խորհրդի 16-րդ հանդիպմանը, որի ընթացքում ընդունվեցին հայտարարություններ ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ:

Դեկտեմբերի 14-17-ը Հայաստան այցելեց ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Մարկ Պերեն դը Բրիշամբոյի գլխավորած պատվիրակությունը:

Եվրոպայի խորհուրդ

Հայաստան-Եվրոպայի խորհուրդ համագործակցությունը 2008թ. ծավալվել է ՀՀ-ԵԽ գործողությունների ծրագրում առաջնայնությունների մշակման, միջկառավարական կոմիտեներում ՀՀ փորձագետների ներգրավածության, ԵԽ տարբեր նախարարական համաժողովներում մասնակցության, ստանձնած պարտավորությունների կատարման եւ համագործակցության այլ ուղղություններով:

2008թ. մայիսի 7-ին Ստրասբուրգում ՀՀ ԱԳ նախարարը մասնակցեց ԵԽ նախարարների կոմիտեի 118-րդ նստաշրջանին: Ստրասբուրգում Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ ունեցավ ԵԽ գլխավոր քարտուղարի, ԵԽԽՎ նախագահի, Ազոյի խմբի անդամների, ԵԽ

մարդու իրավունքների հանձնակատարի եւ մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահի հետ:

Եվրոպայի խորհրդի հետ համագործակցաբար եւ օժանդակությամբ ջանքեր են զործադրվել Հայաստանում հետթղթական զարգացումների արդյունքում առաջացած խնդիրները լուծելու ուղղությամբ:

2008թ. շարունակվել է Հայաստանի համագործակցությունը Եվրոպայի խորհրդի տարբեր կառույցների հետ, մասնավորապես՝ ՀՀ պարտավորությունների կատարումը վերահսկող ԵԽ նախարարների կոմիտեի խմբի (Ազոյի խումբ) եւ ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Թունաս Համարբերգի հետ:

ԵԽԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակությունը շարունակել է ակտիվորեն մասնակցել վեհաժողովի աշխատանքներին:

Ս.թ. փետրվարի 25-ին ԵԽ նախարարների կոմիտեի նախագահող Ալովակիայի ԱԳ նախարար Յան Կուրիշն այցելեց Երևան:

2008թ. մայիսին ՀՀ ԱԺ նախագահը Ստրասբուրգում մասնակցել է ԵԽ խորհրդարանների նախագահների համաժողովին:

2008թ. հուլիսի 22-25-ը ԵԽԽՎ նախագահ Լուիս Մարիա դե Պյուիչն այցելեց Հայաստան:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Շարունակվել է երկկողմ ձեւաչափով ՀՀ հարաբերությունների զարգացումը եվրոպական երկրների հետ:

Տեղի են ունեցել ՀՀ նախագահի այցելությունները Ֆրանսիա, Բելգիա եւ Բուլղարիա: Փարիզում նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի, վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնի եւ Սենատի նախագահ Ժերար Լարշեի հետ:

Բրյուսել այցելության ընթացքում Հայաստանի նախագահը հանդիպումներ է ունեցել Բելգիայի վարչապետ Իվ Լետերմի եւ Սենատի եւ Ներկայացուցիչների պալատի նախագահներ Արման դե Դեկերի եւ Հերման վան Ոոմպույի հետ:

Դեկտեմբերին ՀՀ նախագահը պաշտոնական այցով այցելեց Սոֆիա, որ հանդիպումներ են կայացել երկրի նախագահ Գեորգի Պրվանովի, ժողովրդական ժողովի նախագահ Գեորգի Պիրինսկու եւ վարչապետ Սերգեյ Ստանիշելի հետ:

Նախագահի այցելությունների արդյունքում կոնկրետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել համագործակցության հետագա խորացումը խթանելու վերաբերյալ:

2008 թ.-ին տեղի են ունեցել արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի այցերը մի շաբ Եվրոպական երկրներ, որոնց ընթացքում բանակցություններ են կայացել տարբեր բնագավառներում փոխգործակցության խորացման հնարավորությունների շորջ:

Էդվարդ Նալբանդյանը պաշտոնական այցերով եղել է Ֆրասիայում, Գերմանիայում, Ֆինլանդիայում, Շվեյցարիայում, Լիտվայում, Լատվիայում եւ Էստոնիայում:

ՀՀ ԱԳ նախարարը աշխատանքային այցերով եղել է Սիացյալ Թագավորությունում, Ալբանիայում և Բելգիայում:

2008 թ. Հայաստան են այցելել Ալովենիայի ԱԳ նախարար Դմիտրի Ռուպելը, Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարար Իլկա Կաներվան, Վատիկանի պետական քարտուղար նորին սրբազնություն կարդինալ Տարչիզին Բերտոնեն, Շվեյցարիայի Համադաշնության Դաշնային խորհրդական, ԱԳ նախարար տիկին Միշրին Ջալմի-Ռեյը, Չեխիայի ԱԳ նախարար Կարել Շվարցենբերգը, Ռումինիայի ԱԳ նախարար Լազար Կոմանեսկուն, Հունգարիայի ԱԳ նախարար Քինգա Գյոնցը:

Պետությունների ղեկավարների եւ արտգործնախարարների մակարդակով հանդիպումներ են տեղի ունեցել նաեւ տարբեր միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

Տեղի են ունեցել արտգործնախարարի հանդիպումները Հունաստանի, Կիպրոսի, Մոնակոյի, Լիխտենշտեյնի արտգործնախարարների, Նիդեռլանդների Եվրոպական հարցերով նախարարի հետ:

2008 թ. Եվրոպական երկրների հետ ակտիվ փոխայցելություններ եւ համագործակցություն է ծավալվել նաեւ Հայաստանի պետական կառավարման այլ մարմինների մասով:

Եվրոպական երկրների կողմից Հայաստանում 2008 թ. շարունակել են իրականացվել եւ նախաձեռնվել են մի շարք ներդրումային, գիտական եւ կրթական ծրագրեր:

Դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել Մոնակոյի եւ Լիխտենշտեյնի հետ:

Երեւանում բացվեց Լիտվայի հանրապետության դեսպանությունը:

Բալթյան երկրների եւ Սկանդինավյան երկրների հետ հարաբերությունների խորացման նպատակով որոշում է կայացվել 2009 թ. Վիլնյուսում եւ Հելսինկիում տարածաշրջանային դեսպանությունների հիմնադրման վերաբերյալ:

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համագործակցությունը ԱՊՀ շրջանականերում 2008թ. ընթացքում շարունակել է մնալ ՀՀ արտաքին քաղաքականության կարեւոր ուղղություններից մեկը: Հայաստանը ակտիվորեն մասնակցել է ԱՊՀ շրջանակում ծավալվող գործընթացներին:

Հայաստանի քաղաքական ղեկավարությունը բարձրագույն մակարդակով մասնակցել է ԱՊՀ շրջանակում տեղի ունեցած պաշտոնական եւ ոչ պաշտոնական հանդիպումներին:

Նախագահ Սերժ Սարգսյանը աշխատանքային այցերով եղել է Ուկրաինայում, Ղրղզստանում եւ Ղազախստանում:

Նախագահը այցելել է՝ ‘Ղրիմ’ Սուրբ Խաչ վանական համալիրի հիմնադրման 650-ամյակի արարողությանը: Այցելության ընթացքում տեղի է ունեցել Սերժ Սարգսյանի հանդիպումը նախագահ Վիկտոր Յուշչենկոյի հետ:

Հայ-Ղազախական հարաբերությունները շարունակել են զարգանալ, տեղի է ունեցել նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Աստանա եւ հանդիպումը Ղազախստանի նախագահ Նուրսուլբան Նազարբաևի հետ:

Հայկական կողմն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել ԱՊՀ տնտեսական զարգացման Հայեցակարգի մշակմանն ու ընդունմանը:

Ս.թ. նոյեմբերի 27-28-ին կայացավ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական այցը Բելառուս: Այցելության ընթացքում նախարար Նալբանդյանը հանդիպումներ է ունեցել Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի և ԱԳ նախարար Մերգեյ Մարտինովի հետ:

ԱՍԻՍ ԵՎ ԱՖՐԻԿԱ

2008 թվականին շարունակվել են հայկական դիվանագիտության ջանքերը Զինաստանի, Հնդկաստանի, Շապոնիայի հետ համագործակցության խորացման ուղղությամբ:

Օգոստոսին Պեկինի օլիմպիադական խաղերին մասնակցելու նպատակով Զինաստան այցելեց ՀՀ նախագահ Արքայանի գլխավորած պատվիրակությունը:

Դեկտեմբերին պաշտոնական այցով Զինաստան մեկնեց ՀՀ ԱԺ նախագահ Հովհան Աբրահամյանի գլխավորած պատվիրակությունը:

Աշխատանքներ են տարվել Զինաստանի հետ հարաբերությունները զարգացնելու, հայ հասարակության լայն շրջանակների (ձեռնարկատերեր, կրթական եւ գիտական համակարգի ներկայացուցիչներ, լրագրողներ, մշակութային գործիչներ) կապերը եւ համագործակցությունը ընդլայնելու եւ խորացնելու ուղղությամբ:

2008 թ. Երեւանի Վ.Քրյուսովի անվան օտար լեզուների Համալսարանում բացվեց «Կոնֆուցիոսի ինստիտուտը», որը զբաղվելու է չինարեն լեզվի ուսուցմամբ եւ մշակույթի ներկայացմամբ:

ՉԺՀ կառավարությունը շարունակել է Հայաստանի տնտեսության տարբեր բնագավառներին տրամադրվող դրամաշնորհային օժանդակությունը:

Հայ-ճապոնական երկկողմ համագործակցությունը շարունակվել է հիմնականում Հայաստանի տնտեսական բարեփոխումների եւ զարգացման աջակցման ծրագրերի միջոցով: Որոշում է կայացվել 2009թ. Շապոնիայում ՀՀ դեսպանություն հիմնադրելու վերաբերյալ:

Հնդկաստանի հետ հարաբերությունները հազեցած էին պատվիրակությունների այցելություններով, գործարար շփումներով, մշակութային միջոցառումներով: Նյու Դելիում բացվել է «Հայաստանի» փողոցը, արարողությանը մասնակցել է Երեւանի քաղաքապետը:

Ջանքեր են գործադրվել Հարավային Կորեայի, Վիետնամի, Ինդոնեզիայի, Շրի Լանկայի եւ Թայլանդի, Սինգապուրի եւ Լաոսի հետ գործակցության ընդլայնման ուղղությամբ:

Քայլեր են ձեռնարկվել Աֆրիկյան մայրցամաքի երկրների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել Մալիշտանիայի եւ Կոմորոսի հետ:

ԿԱՆԱԴԱ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱ

2008 թվականի ընթացքում հայ-կանադական հարաբերությունները զարգացել են երկկողմ ու բազմակողմ քաղաքական խնդիրների շուրջ երկու երկրների միջև երկխոսությունն

ընդլայնելու եւ առեւտրական կապերն ու տնտեսական գործակցությունը խթանելու ճանապարհով:

Աշխատանքային այցով Կանադայում գտնվող ՀՀ ՍԳ նախարարը հանդիպում է ունեցել Կանադայի տարածքային կառավարման, ենթակառուցվածքների եւ տրանսպորտի նախարար Լորանս Քենոնի (ներկայիս ԱԳ նախարար) հետ, քննարկել հայ-կանադական երկողմ հարաբերություններին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Տարփա ընթացքում շարունակվել է տարբեր բնագավառներում համատեղ ծրագրերի իրականացումը առանցքային էր երկու երկրների տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների միջեւ համագործակցության հաստատման տեսանկյունից:

Հայաստանի համագործակցությունը լատինամերիկյան երկրների՝ Արգենտինայի, Բրազիլիայի, Մեքսիկայի եւ Ուրուգվայի հետ շարունակել է գարգանալ:

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Հայաստանը քայլեր է ձեռնարկել արարական երկրների հետ համագործակցության խորացման, միջազգային կազմակերպություններում փոխադարձ աջակցության ապահովման, փոխահավետ առեւտրատնտեսական եւ գիտամշակութային համագործակցության ընդլայնման եւ խթանման համար:

Շարունակվել է ավանդական բարեկամական հարաբերությունների գարգացումը Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի եւ Արաբական Միացյալ Էմիրությունների հետ: Տեղի են ունեցել փոխայցելություններ, կազմակերպվել են խորհրդատվություններ եւ բազմաթիվ մշակութային միջոցառումներ: 2008թ. որակապես նոր մակարդակի բարձրացվեց ՀՀ փոխգործակցությունը Արաբական պետությունների լիգայի հետ. Եզիդական ՀՀ դեսպանը հավատարմագրվեց ԱՊԼ-ում որպես Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ:

Հայաստանը ավարտել է իր խաղաղապահ առաքելությունն Իրաքում եւ դուրս բերել Իրաքի հետպատերազմյան վերականգնմանն աջակցելու նպատակով գործուղված իր ստորաբաժանումը:

ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միավորված ազգերի կազմակերպություն

Սեպտեմբերի 23-ից 26-ը ՍՍԿ-ի ԳԱ աշխատանքներին մասնակցեց նախագահ Սերժ Սարգսյանը: Այցի շրջանակում ՀՀ նախագահը ծրագրային ելույթով հանդես եկավ Գլխավոր Ասամբլեայի նիստին եւ հանդիպումներ ունեցավ ՍՍԿ-ի գլխավոր քարտուղարի, Կիպրոսի, Լատվիայի եւ Սերբիայի նախագահների, Նիդեռլանդների վարչապետի եւ ՍՄ պետքարտուղարի հետ:

2008թ. Հայաստանը շարունակեց մասնակցել ՍՍԿ-ի հետեւյալ հանձնաժողովների եւ կոմիտեների աշխատանքներին.

- Բնակչության եւ զարգացման հանձնաժողով (2004-2008թթ.),
- Ծրագրման եւ համակարգման կոմիտե (2006- 2008թթ.),
- Համաշխարհային փոստային միության վարչական խորհուրդ (2004-2008թթ.),
- Հանգարության կանխարգելման եւ քրեական արդարադատության հանձնաժողով (2006-2008թթ.),
- Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողով (2007-2011թթ.),
- Միջազգային առեւտրի իրավունքի հանձնաժողով (UNCITRAL) – (2007-2012թթ.),

2008թ. ընթացքում Հայաստանը ընտրվել եւ վերընտրվել է հետեւյալ հանձնաժողովներում եւ մարմիններում՝

- Ծրագրման եւ համակարգման կոմիտե (2009-2011թթ.),
- Վիճակագրության հանձնաժողով (2009-2012թթ.),
- ՄԱԿ-ի բնակավայրերի ծրագրի ղեկավար խորհուրդ (UN-Habitat) – (2009-2012թթ.),

2008թ. Հայաստանը շարունակել է համագործակցությունը ՄԱԿ-ի տարբեր մասնագիտացված գործակալությունների եւ ծրագրերի հետ: Աշխատանքներ են տարվել մշակելու 2010-2014թթ. ՄԱԿ-ի զարգացման օժանդակության շրջանակների մասին ծրագրային փաստաթուղթը: Այն կնախանշի Հայաստանում ՄԱԿ-ի կողմից իրականացվող համագործակցության ուղղությունները:

Մարտին ստորագրվեց Հայաստանի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջև 2007-2009թթ. համագործակցության վերաբերյալ ծրագիրը, որը նոր հեռանկարներ է բացում Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի առավել կանոնակարգված գործունեության համար կրթության, գիտության, մշակույթի եւ հեռահաղորդակցության ոլորտներում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հոբելյանական 2008թ. օրացույցում Հայաստանի առաջարկությամբ ընդգրկվել էին Վիլյամ Սարոյանի եւ Վիկտոր Համբարձումյանի 100-ամյա տարեդարձները, որոնց կապակցությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ բազմաթիվ միջոցառումներ են կայացել:

Աշխատանք է կատարվել նաև մարդկանց շահագործման (քրաֆիկինգի) դեմ պայքարի ուղղությամբ: Կառավարության որոշմամբ բարձրացվել է նախկինում գործող միջգերատեսչական հանձնաժողովի կարգավիճակը՝ ստեղծելով մարդկանց շահագործման (քրաֆիկինգի) դեմ պայքարի հարցերով խորհուրդ ՀՀ փոխվարչապետի ղեկավարությամբ: Շարունակվել է ակտիվ համագործակցությունը քրաֆիկինգի դեմ պայքարի ոլորտում ներգրավված միջազգային կազմակերպությունների եւ Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունների հետ:

Ֆրանկոնիայի միջազգային կազմակերպություն

ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցել եւ ելույթ է ունեցել Քվերեկում կայացած Ֆրանկոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) 12-րդ գագարաժողովին, որը որոշում է ընդունել Հայաստանին Ֆրանկոնիայի միջազգային կազմակերպության ասոցիացված անդամի կարգավիճակ շնորհելու մասին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍՏԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը ակտիվորեն մասնակցեց Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՄԾՏՀ) եւ նրա շրջանակներում գործող մարմինների գործունեությանը: ԱԳՆ եւ ՀՀ ճյուղային նախարարությունների համադրված ջննքերի շնորհիվ հայկական պատվիրակությունները մասնակցել են ՄԾՏՀ բազմաթիվ նախարարական, աշխատանքային խմբերի եւ այլ հանդիպումների:

Սեպտեմբերի 8-10-ը Հայաստան այցելեց ՄԾՏՀ գլխավոր քարտուղար դեսպան Լեռնիդաս Քրիզանքովովոսը:

Հոկտեմբերի 23-ին ՀՀ ԱԳ նախարարը Տիրանայում մասնակցեց ՄԾՏՀ արտգործնախարարների հանդիպմանը, որտեղ կազմակերպության նախագահությունը փոխանցվեց Հայաստանին:

Ս.թ. նոյեմբերի 24-ին ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը որպես ՍԾՏՀ գործող նախագահ այցելեց Ստամբուլում գտնվող ՍԾՏՀ կենտրոնակայան կազմակերպությունում ՀՀ նախագահության առաջնայնությունները ներկայացնելու նպատակով:

Դեկտեմբերի 4-ին Բաքվում տեղի է ունեցել TRACECA Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային ծրագրի անդամակից երկրների տրանսպորտի նախարարների կոնֆերանսը, որին չնայած Աղբեջանի կողմից ստեղծված խոշնություններին մասնակցել է նաև Հայաստանի պատվիրակությունը:

Չարունակվել է համագործակցությունը ՍԱԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության հետ (ՊԳԿ):

Հայաստանը շարունակել է համագործակցությունը ՍԱԿ-ի Ասիայի եւ խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական եւ սոցիալական հանձնաժողովի (ESCAP, ԱԽՏՍՀ), դեպի ծով ելք չունեցող երկրների խմբի (LLDC) հետ, մասնակցել է ԱԽՏՍՀ-ի 64-րդ նստաշրջանին եւ այդ շրջանակներում «Էներգետիկ անվտանգություն եւ կայուն զարգացում» նախարարական հանդիպմանը:

Հոկտեմբերի 21-23-ը Հայաստան են այցելել ՍԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Շեյք Սիդի Դիարան:

Հայաստանում ակտիվ գործունեություն է ծավալել Ասիական զարգացման բանկը:

ՈՒՍԴՄԱՋԱՐԱԿԱՆ ՀԱՍԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

2008թ. սեպտեմբերին Հայաստանը ստանձնեց ՀԱՊԿ նախագահությունը:

2008թ. ապրիլին Երեւանում կայացել է ՀԱՊԿ Ռազմատեխնիկական համագործակցության միջպետական հանձնաժողովի 5-րդ նիստը, որի ընթացքում քննարկվել են ՀԱՊԿ անդամ պետությունների միջեւ ռազմատնտեսական համագործակցության հետագա խորացման վերաբերյալ հարցեր:

2008թ. հունիս-օգոստոս ամիսներին Հայաստանում անցկացվեց «ՀՀ-ի ինքնիշխանության եւ տարածքային ամրողականության համատեղ պաշտպանության գործողության նախապատրաստում եւ անցկացում» թեմայով ՀԱՊԿ անդամ պետությունների «Ռուբեժ-2008» համատեղ հրամանատարաշտաբային զորավարժությունը, որը հնարավորություն ընձեռեց ստուգելու անդամ պետությունների հավաքական պաշտպանության պատրաստվածությունը, ինչպես նաև մշակելու Հայաստանի հանդեպ ազրեսիայի սպառնալիքի կամ ազրեսիայի ակտի դեպքում ձեռնարկվելիք միջոցները:

2008թ. սեպտեմբերի 5-ին Մոսկվայում կայացավ ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի հերթական նստաշրջանը, որի ընթացքում քննարկվեցին ահարեկչության եւ թմրամյութերի անօրինական շրջանառությանը հակագրելու, ՀԱՊԿ շրջանակներում ռազմական շինարարության, ՀԱՊԿ անդամ պետությունների տեղեկատվական անվտանգության համակարգին վերաբերող հարցեր: Նստաշրջանի ընթացքում ընդունվեց հռչակագիր, որով անդամ պետությունները կրկին հաստատեցին միջազգային հիմնարար խնդիրների նկատմամբ իրենց մոտեցումների ընդհանրությունը:

Հայաստանը որպես ՀԱՊԿ-ում նախագահող երկիր հետամուտ եղավ ՀԱՊԿ շրջանակներում արտաքին քաղաքականության համադրման կատարելագործմանը:

Հանրապետության նախագահը մասնակցել է Հավաքական անվտանգության խորհրդի 2 նիստի:

- Հայաստանի համակարգման անց են կացվել ՀԱՊԿ-ում նախագահող պետության գործառույթներից բխող մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝
- ՀԱՊԿ-ում ՀՀ նախագահության ընթացքում տեղի են ունեցել ՀԱՊԿ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների երկու հանդիպում Նյու-Յորքում եւ Հելսինկիում, անվտանգության խորհրդների քարտուղարների հանդիպում եւ պաշտպանության նախարարների խորհրդի նիստ՝ Երեւանում:
 - Հայաստանի նախաձեռնությամբ կայացել են երրորդ երկրներում ՀԱՊԿ անդամ պետությունների դիվանագիտական ներկայացուցությունների դեկավարների մի շարք հանդիպումներ եւ խորհրդատվություններ:

ՆԱՏՕ

2008թ. ընթացքում շարունակվել են Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) իրագործմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես ճգնաժամների կառավարման եւ արտակարգ իրավիճակների, ռազմական բարեփոխումների, սահմանային անվտանգության, ահաբեկչության դեմ պայքարի, Գիտություն հանուն խաղաղության ծրագրի եւ հանրային դիվանագիտության ոլորտներում համագործակցության խորացման ուղղությամբ:

2008թ. ապրիլի 3-ին ՀՀ նորընտիր նախագահ, ՀՀ վարչապետ Ս. Սարգսյանը աշխատանքային այց է կատարել Բուխարեստ, որտեղ մասնակցել է ՆԱՏՕ-ի Եվրաատլանտյան գործընկերության խորհրդի անդամ երկրների դեկավարների հանդիպմանը:

2008թ. նոյեմբերի 5-ին Բրյուսել կատարած այցի ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպել է ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Յան դե Հուա Սիսեֆերի հետ:

2008թ. մայիսի 28-ին տեղի ունեցավ Հայաստանի մասնակցությամբ Հյուսիսատլանտյան խորհրդի հանդիպումը, որին մասնակցում էին ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը եւ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Դրանով ավարտվեց ԱԳԳԾ իրականացման առաջին երկամյա փուլը: Կազմվել է վերանայված գործողությունների ծրագրի նախագիծը:

2008թ. հունիսին Հայաստանի Հանրապետությունը կրկնապատկեց իր խաղաղապահ ուժերը Կոստվոյում՝ հասցնելով մեկ վաշտի (70 հոգի):

2008թ. հունիսին Հայաստանում ՀՀ-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում կայացավ հերթական ՆԱՏՕ-ի շաբաթը, որի ընթացքում տեղի ունեցան Դաշինքի բարձրաստիճան ներկայացուցիչների այցեր Երեւան:

Եվրոպական սպառագինությունների վերահսկման գործընթաց

Համաձայն Եվրոպայում Սովորական Զինված Ուժերի մասին Պայմանագրի եւ 1999թ. Վիեննայի Փաստաթղթի պահանջների, Վիեննա՝ Համատեղ Խորհրդատվական Խմբին, ինչպես եւ ԵԱՀԿ Հակամարտությունների Կանխարգելման Կենտրոնին է տրամադրվել համադրված ՀՀ ամենամյա ռազմական տեղեկատվությունը:

Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի եւ 1999 թ. Վիեննայի փաստաթղթի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ կազմակերպվել է օտարերկրյա պետությունների տեսչական խմբերի եւ Վիեննայի փաստաթղթի գնահատման այցի ընդունումը (ընդհանուր՝ 8 այցելություն):

Տարվա ընթացքում ՍԱԿ-ի եւ ԵԱՀԿ համապատասխան բանաձեւերի համաձայն ներկայացվել է ամենամյա հարցաշարերի պատասխաններ ահաբեկչության դեմ պայքարի, տարբեր սպառազինությունների արտահանման եւ ներմուծման, ռազմնական ծախսերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության, ԵԱՀԿ Վարքի կանոնակարգի կատարման եւ դրանց առնչող մի շարք այլ խնդիրների վերաբերյալ:

Տարբեր միջազգային ատյաններում Հայաստանը շարունակքար բարձրացրել է Ադրբեյջանի կողմից ԵՄՁՈՒ նախատեսվող սպառազինությունների առաստաղների կոպիտ խախտումների փաստը: ՀՀ մտահոգությունը կիսվել է ԵԱՀԿ անդամ մի շարք պետությունների կողմից:

Գլոբալ անվտանգության եւ ոչ կոնվենցիոնալ խնդիրներ

Համագործակցութունը Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության հետ ընթացել է բնականոն հունվ: Միջուկային անվտանգության կոնվենցիայի ներքո ապրիլին Հայաստանը ներկայացրեց 4-րդ ազգային գեկույցը:

Մայիսին կայացավ Հայաստանի ատոմային Էլեկտրակայանի(ՀԱԷԿ) դրույթների 3-րդ կոնֆերանսը Երևանում, որի ժամանակ դրույթները հաստատեցին իրենց մտադրությունը ՀԱԷԿ-ի անվտանգության բարձրացմանը նյութական եւ փորձագիտական առումով նպաստելու վերաբերյալ:

Հուլիսի 14-ին ԱԱՆ կատարած այցի ընթացքում ՀՀ արտգործնախարարն ու ԱԱՆ պետական քարտուղարը ստորագրել են Գործողությունների ծրագիր միջուկային եւ ռադիոակտիվ նյութերի մաքսանենգությունը կանխելու վերաբերյալ:

Հաշվետու տարում ՀՀ-ն կատարել է Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներն ըստ հաստատված ցանկի (86 կազմակերպություն, 776 մլն. դրամ): Չարունակվել է մի շարք կազմակերպությունների գծով պարտքերի մարումն ըստ հաստատված մարման ծրագրերի:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾԱՆԱՉՈՒՄ

Ապրիլ ամսին աշխարհի տասնյակ քաղաքներում նշվեց Մեծ Եղեռնի 93-րդ տարելիցը, անցկացվեցին հարյուրավոր միջացառումներ՝ ոգեկոչման միջոցառումներ, կոնֆերանսներ, բացվեցին զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձաններ:

Մարտին ՍԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 7-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունվեց Հայաստանի հեղինակած «Ցեղասպանության կանխարգելում» բանաձեւը, որը համահեղինակել են 62 պետություններ:

Դեկտեմբերի 4-5-ը Հելսինկիում կայացած ԵԱՀԿ նախարարական խորհրդի 16-րդ հանդիպման արդյունքում ՀՀ առաջարկությամբ ընդունվեց Հոչակագիր Ցեղասպանության հանցանքի պատժման եւ կանխարգելման մասին կոնվենցիայի 60-րդ տարելիցի կապակցությամբ:

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2008թ. շարունակվել է աշխատանքն օտարերկրյա պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների խախտված իրավունքները վերականգնելու, օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև այլ տարբեր հարցերում (վավերականությունը լրացած փաստաթղթերի փոխարինում, տարաբնույթ տեղեկանքների տրամադրում, նոտարական գործառություններ եւ այլն) աջակցելու ուղղությամբ:

2008թ. օգոստոսին Հարավային Օսեթիայի շուրջ տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ աջակցություն է ցուցաբերվել Վրաստանի տարածքից տասնյակ հազարավոր ՀՀ քաղաքացիների հայրենիք էվակուացման և հազարավոր օտարերկրացիների Հայաստանով տարանցման հետ կապված խնդիրների լուծմանը:

ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԳՆ կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել 82 իրավական ակտերի նախագիծ (հավելված 1՝ 2 օրենքի նախագիծ, ՀՀ կառավարության 13 որոշման նախագիծ (ընդունվել են 12-ը), ՀՀ վարչապետի 67 որոշման նախագիծ (ընդունվել են 67-ը):

2008 թվականի ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը իրականացրել է 308 միջազգային պայմանագրի նախագծերի մշակման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված տարրեր գործառություններ: ՀՀ Նախագահի հավանությունն է ստացվել 27 միջազգային պայմանագրի կնքման առաջարկություն: ՀՀ կառավարության հավանությունն է ստացել 50 միջազգային պայմանագրի կնքման առաջարկություն:

2008 թվականի ընթացքում ստորագրվել է 65 միջազգային պայմանագիր (հավելված 1), Հայաստանի Հանրապետությունը միացել է 8 միաջազգային կոնվենցիայի:

ՀՀ Նախագահի հաստատմանն է ներկայացվել և Նախագահի կողմից հաստատվել են 14 միջազգային պայմանագիր: ՀՀ Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացվել 31 միջազգային պայմանագիր, որոնցից վավերացվել են 23-ը:

2008թ. ընթացքում ուժի մեջ են մտել 42 միջազգային պայմանագիր:

ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ նախագահը հարցազրոյցներ է տվել Euronews, France 24, CNN Turk հեռուստաթանկերությունների, Der Standard, Le Monde, Le Figaro, Frankfurter Allgemeine Zeitung, Radikal թերթերին, Xinhua տեղեկատվական գործակալությանը, տպագրվել է նախագահի հոդվածը The Wall Street Journal թերթում:

Արտասահմանյան ուղևորությունների ընթացքում Հայաստանի արտգործնախարարը մասնակցել է տասնյակ ասուլիսների, որոնցից հարկ է նշել Ստամբուլում տեղի ունեցած ասուլիսը առավել քան 100 լրագրողների մասնակցությամբ: ԱԳ նախարարը տվել է մի քանի տասնյակ հարցազրոյցներ օտարելքոյա ՁԼՄ-երին:

Արտգործնախարարը Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ ելույթներով հանդես է եկել Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում, Վաշինգտոնի «Կարնեգի» հիմնադրամում (The Carnegie Endowment for International Peace), Մեծ Բրիտանիայի Սիջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում (Chatham House), Շվեյչարիայի Անվտանգության եւ զարգացման քաղաքականության ինստիտուտում, Վիլնյուսի համալսարանում, Բելգիայի Սիջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում:

2008 թ. Հայաստան են այցելել շուրջ 300 օտարերկյա լրագրողներ: